ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ ПУБЛИКАЦИИ

ԵԴԵՍԻԱՅԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ
(CHRONICON EDESSENUM)

Եդեսիայի ասորերեն ժամանակագրության հեղինակը հայտնի չէ. այդ փոքրիկ երկը անանուն է հասել մեզ, բայց իրական պատմական արժեք ունի և մեզ շահեկան շատ տեղեկություններ է հաղորդում Մերձավոր Արևելքի պատմությունից։ Այդ աշխատությունը պահպանվել է Վատիկանի № CLVIII[1] ձեռագրում և հրատարակվել է ու լատիներեն թարգմանվել Ասսեմանու կողմից[2]։

Եդեսիայի ժամանակագրությունը մանրամասն ուսումնասիրել, հրատարակել և գերմաներեն է թարգմանել Hallier-*ը*[3]։ *Կա նաև նրա անգլերեն թարգմանությունը*[4]։

Գրքույկն սկսվում է Սելևկյան թվականության 180 տարվանից[5]. *սակայն նրա արձանագրությունները խիստ համառոտ են մինչև Սելևկյան 513 (—202 մեր թ.) թվականը հասնելը։ Վերջին տեղեկությունը վերաբերում է 540 թ., երբ և հավանորեն կազմվել է այս փոքրիկ երկը։*

Հեղինակն օգտագործել է Եդեսիայի արխիվները և մեզ համար այժմ կորած շատ այլ վավերագրեր։ Կրոնական հարցերում նա առանձնապես մոլեռանդ չէ և կոպիտ արտահայտություններ չի սիրում, մի հանգամանք, որ նշանակալից է հեղինակի ապրած ժամանակի համար։ Hallier-*ը մատնանշում է (էջ 10), որ հեղինակը ակնհայտնի հակում է ցույց տալիս դեպի նեստորականությունը, թեև ինքն անշուշտ ուղղափառ է*[6]։

Բացի Ասսեմանու հրատարակությունից, որն, ի դեպ, արտատպված է նաև Michaelis-*ի ասորերեն քրեստոմատիայում,* Chronicon Edessenum-*ի բնագիրը և լատիներեն թարգմանությունը հրատարակել է* Ignatius Guidi-*ն 1903 թ. Փարիզում* Corpus Scriptorum Christianorum Orientalium *շարքի մեջ* Scriptores Syri, Chronica Minora, series tertia—tomus IV, textus *և* vetsio *վերնագրի տակ։*

Այս թարգմանությունը կատարելու և ծանոթագրելու ժամանակ մեր ձեռքին եղել են Guidi-*ի հրատարակած ասորերեն բնագիրն ու լատիներեն թարգմանությունը, ինչպես նաև* Hallier-*ի գերմաներեն թարգմանությունն իր ծանոթագրություններով, որոնցից և օգտվել ենք պետք եղած չափով։*

Օգտվողներին դյուրություն տալու նպատակով այստեղ դնում ենք ասորական ամիսների անունները և նրանց համապատասխանող անունները ըստ Հուլյան տոմարի.

1. Էլուլ կամ Իլուլ—սեպտեմբեր, 2. Թշրին քըդեմ—հոկտեմբեր, 3. Թշրին խրայ—նոյեմբեր, 4. Քանուն քըդեմ—դեկտեմբեր, 5. Քանուն խրայ—հունվար, 6. Շեբաթ (շըբաթ)—փետրվար, 7. Ադար—մարտ, 8. Նիսան—ապրիլ, 9. Իյար—մայիս, 10. Հազիրան կամ Խազիրան—հունիս, 11. Թամուզ (թամմուզ)—հուլիս, 12. Աբ—օգոստոս։

Պրոֆ. Ե. Գ. ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆ

Տե՛ս Catal, III, 329.

[2] Bibliotheca Orientalis Clementino-Vaticana *վերնագիրը կրող հայտնի ժողովածուի մեջ, I հատ., էջ 387—417։*

[3] Hallier, Untersuchungen über die Edessenische Chronik (Texte und Untersuchungen, hrsg. Oscar von Gebhardt und Adolf Harnack, Leipzig, 1892).

[4] Journal of Sacred Literature, 1864, vol. V (new. ser., *էջ 28 և շար.)։ Սակայն Հալլիերին չի հաջողվել գտնել այս թարգմանությունը։*

[5] *Սելևկյան թվականության առաջին տարին է 311/312-ը մ. թ. ա.։*

[6] *Տե՛ս այս գրքույկի մասին ընդհանրապես* A Short History of Syriac Literature by William Wright. London, 1894 *և նույն գրքի ռուսերեն թարգմանությունը (թարգմանիչ՝ Կ. Ա. Տուրաևա, խմբագրությամբ և լրացումներով պրոֆ. Պ. Կ. Կոկովցովի),* СПб, 1902. *հմմտ.* Duval, Lit. Syr., *էջ 190։*

ԵԴԵՍԻԱՅԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ (GHRONICON EDESSENUM)

I (VIII) 513 թվականի Թշրին խրայ[1] ամսին, Սևերոս կայսեր և Աբգար Բար Մանուի[2] իշխանության ժամանակ ավելի ու ավելի առատորեն բխեց Աբգար Մեծի[3] մեծ պալատից սկիզբ առնող աղբյուրը, ջուրը սովորական կարգով բարձրացավ, լցվեց և հոսեց դեպի ամեն կողմ, այնպես որ արքայական սրահները, սյունազարդ միջանցքները և շենքերը լիքը լցվեցին ջրով։ Երբ այս տեսավ մեր տերը, Աբգար թագավորը, հեռացավ իր պալատից վերև գտնվող լեռան [ջրհեղեղից] ապահով վայրը, որտեղ ապրում էին արքայական գործավորները։ Մինչ գործագիտակ անձինք քննարկում էին, թե ինչպես պետք է վերացնել շարունակ ավելացող ջուրը, հանկարծ տեղացող հորդառատ անձրևի հետևանքով Դայծան գետը, իր մեջ ընդունելով օտար ջրերի մասսաներ, խիստ անժամանակ[4] հեղեղեց, բայց գտավ ջրարգելակները մեծ երկաթե տախտակներով և երկաթե ամուր պարզունակներով փակված և դիզանալով, քանի որ ջուրը չէր կարող հոսել [քաղաքի մեջ], քաղաքի պարիսպներից դուրս վերածվեց մի մեծ ծովի, որի ջրերը սկսեցին թափանցել քաղաքը որմանցքերի միջով։

Աբգար թագավորը ջահերի լույսի տակ դիտում էր այսպես կոչված մեծ պարսկական աշտարակի բարձունքից [հեղեղող] ջուրը, և նրա հրամանով բաց արվեցին արևմտյան քաղաքորմի ութ ջրարգելակների դռները, որոնցով անցնում է գետը. բայց հենց այդ վայրկյանին հեղեղը քանդեց արևմտյան քաղաքորմը, կործանեց մեր տեր թագավորի մեծ և հոյակապ պալատը, քշեցտարավ իր ճանապարհին գտնված ամեն բան, գեղեցիկ և հոյակերտ շենքերը, այն ամենը, ինչ որ հարավակողմում մոտ էր գտնվում գետին, և ավերեց նաև քրիստոնեական եկեղեցու սրբավայրը։ Դրա շնորհիվ ավելի քան 2000 մարդ մեռան. բայց նրանցից շատերին ջուրն անակնկալի էր բերել գիշերը՝ քնած ժամանակ, և նրանք խեղդվել էին։

Քանի որ քաղաքը լի էր թշվառության աղաղակներով և Աբգար թագավորը տեսնում էր տեղի ունեցած ավերածությունը, նա հրամայեց, որ քաղաքի արհեստավորները գետի մոտերքից հեռացնեն իրենց գործանոցները և այլևս ոչ ոք գետի ափին գոր-

---

1 =201 թ. նոյեմբերին։

2 179—214 և իր Աբգար X Բար Աբգար որդու հետ միասին մինչև 216 թ.։ Այդ տարին Օղրոենան դարձավ հռովմեական նահանգ։ Աբգար IX-ի ժամանակ Եդեսիան քրիստոնեություն ընդունեց (202—203 թթ.)։

3 Աբգար Մեծը հավանորեն Աբգար V Ուքամա Բար Մանուն է (4 թ. Քր. ա.—7 թ. Քր. հ.)։

4 Բառացի՝ «ոչ իր օրը և իր ամսին»։ Հեղեղումների մասին հիշատակված հետագա հաղորդագրությունների համաձայն՝ (XI, LII, XC, հմմտ. CVI) այդ հեղեղումները տեղի էին ունենում սովորաբար գարնանը (մարտի վերջից մինչև մայիսի կեսերը)։

ծանոց չկառուցի, և ինժեներների (երկրաչափների) և գործագիտակ մարդկանց խորհրդով գործանոցները շինվեցին գետի հունի [բնական] լայնությանը համապատասխանորեն, որ նախկին զանգվածը է՛լ ավելի մեծացրին (բառացի՝ այնպես, ինչպես որ գետի լայնքն էր, նրանք մեծացրին)։ Որովհետև թեև ջուրը հոսում էր առատորեն և ուժգին, գետի հունի լայնությունը շատ փոքր էր և նա 25 առվակներից ջուրն ամեն կողմից իր մեջ էր ընդունում։

Աբգար թագավորը [այնուհետև] հրամայեց, որ բոլոր նրանք, ովքեր իրենց արհեստը բանեցնում էին գետի երկարությամբ կառուցված սրահներում, Թշրին քըդեմ (հոկտեմբեր) ամսից մինչև Նիսան (ապրիլ) իրենց գործանոցներում չգիշերեն, այլ որ քաղաքի վրա հսկել պարտավոր ոստիկանության զինվորներից հինգ հոգի ձմեռվա ամբողջ ընթացքում գիշերեն քաղաքորմի վրա, [հատկապես] այն տեղում, որտեղով ջուրը հոսում է քաղաքի մեջ, և եթե նրանք գիշերով [այդ] նկատեն և լսեն աղմուկը կուտակվող ջրային օտար զանգվածների, որոնք սկսում են հոսել քաղաքի մեջ...[5], և եթե առհասարակ որևէ մեկը լսել է [ջրերի] աղմուկը, բայց զլացել է դուրս գալ [աղաղակելով], թե «ջուրը» [գալիս է], նա պետք է պատիժ կրի թերացման համար, որ նա արհամարհել է թագավորի հրամանը։ Եվ այդ հրամանը պետք է այժմվանից սկսած տևական ուժ ունենա։

Բայց մեր տիրոջ՝ Աբգար թագավորի համար նրա հրամանով մի շենք կառուցվեց որպես արքայական ձմեռային բնակարան Բեթ Տաբարայի վրա։ Նա այնտեղ բնակվեց ամբողջ ձմեռը, իսկ ամառը տեղափոխվեց նոր պալատը, որ նրա համար կառուցվել էր աղբյուրի վերևում։ Նրա մեծամեծները ևս իրենց համար բնակելի տներ շինեցին մոտակայքում (բառացի՝ հարևանության մեջ), որտեղ ապրում էր թագավորը բարձր փողոցի վրա, որը Բեթ Սահրայե է կոչվում։

Որպեսզի վերահաստատվի քաղաքի նախկին բարեկեցությունը, Աբգար թագավորի հրամանով ներվեցին ինչպես քաղաքացիների, այնպես էլ գյուղերի և ագարակների բնակիչների պարտք մնացած հարկերը և հարկերի [վճարում] չպահանջվեց հինգ տարի, որպեսզի քաղաքը նորից բնակչությամբ լցվի և շենքերով զարդարվի։

Բայց Մար-յաբ Բար Շեմեշն ու Քայոմա Բար Մեգերթաթը (?)՝ Ուռհայի քաղաքային քարտուղարները, Աբգար թագավորի հրամանով գրի առան այս եղելությունները։ Ուռհայի արխիվի տեսուչները, Բարդինը և Բոլիգան, որպես քաղաքի կոմիսարներ ընդունեցին այդ [գրությունը] և զետեղեցին արխիվում։

II (I)[6] 180 թվականին սկսեցին թագավորներ կարգել Ուռհան կառավարելու համար։

III (II) 266 թվականին կայսր դարձավ Օգոստոս Կեսարը՝։

---

5 Այստեղ բնագիրը հավանորեն պակասավոր է, ինչպես ենթադրում է Հալլիերը։

6 Փակագծերի մեջ դրված թվերը Ասսեմանիի կատարած հատվածաբաժանման հին թվերն են։

7 =44/43 թ. Քր. ա.։

IV (III) 309 թվականին ծնվեց մեր Տերը[8]։

V (IV) 400 թվականին Աբգար թագավորը կառուցեց իր Մավզոլեումը ի պատիվ իր մահվան։[9]։

VI (V) 449 թվականին Մարկիոնը դուրս եկավ կաթողիկե եկեղեցուց[10]։

VII Կեսար Լուցիուսը իր եղբոր հետ միասին պարթևներին ենթարկեց հռովմայեցիներին իր թագավորության հինգերորդ տարին։

VIII (VI) 465 թվականի Թամուզի 11-ին ծնվեց Բարդայծանը[11]։

IX 517 թվականին Աբգարն իր քաղաքում ամրություն կառուցեց։

X 551 թվականին ծնվեց Մանին[12]։

XI 614 թվականին, Դիոկլետիանոս կայսեր օրով, Ուռհայի պարիսպները երկրորդ անգամ կործանվեցին[13]։

XII 624 թվականին Կունա եպիսկոպոսը հիմք դրեց Ուռհայի եկեղեցուն, իսկ այն [շինությունը] վերջացրեց նրա հաջորդ Շաադ եպիսկոպոսը։

XIII 635 թվականին կառուցվեց Ուռհայի գերեզմանատունը (Κοιμητήριον) Այթալլահա եպիսկոպոսի ժամանակ, Նիկիայի մեծ ժողովից մի տարի առաջ։

XIV 636 թվականին Ուռհայում եպիսկոպոս կարգվեց Այթալլահան[14]։ Նա կառուցեց գերեզմանատունը և եկեղեցու արևելյան կողմը։

XV Հետևյալ տարին հավաքվեց Նիկիայի ժողովը 318 եպիսկոպոսներով[15]։

XVI 639 թվականին կատարվեց Ուռհայի եկեղեցու ընդարձակումը մի կից կառուցվածքով[16]։

XVII 649 թվականին վախճանվեց Մծբինի եպիսկոպոս Մար Հակոբը[17]։

XVIII 657 թվականին Ուռհայի եպիսկոպոս դարձավ Աբրահամը, որը կառուցեց Խոստովանողների մատուռը[18]։

---

8 =3/2 թ. Քր. ա.։

9 =88/89 թ. Կառուցողը Աբգար VI-ն է (71—91)։

10 Մարկիոնի և մարկիոնականների մասին տե՛ս Ս. Տեր-Մինասյան, Միջնադարյան աղանդների ծագման և զարգացման պատմությունից, Երևան, 1968, էջ 46—54։

11 =154 թ. հուլիսի 11-ին։ Նրա մասին տե՛ս Ս. Տեր-Մինասյան, նշվ. աշխ., էջ 54—57։

12 Մանիի և մանիքեության մասին տե՛ս հիշված գիրքը, էջ 91—106։ Մանիի ծննդյան թվականը սխալ է նշված (239/240)։ Իրոք Մանին ծնվել է 215—216 թվականին։

13 Հմմտ. սույն երկի CVI հատվածը, ըստ որի պարիսպների այդ կործանումը տեղի է ունեցել 303 թ. մայիսին։

14 Այթալլահան որպես եպիսկոպոս մասնակցել է Նիկիայի ժողովին և ստորագրել է նրա դրած «կանոնների» տակ։ Այթալլահա անունը հավանորեն նշանակում է «աստված է բերել»։

15 Նիկիայի ժողովը (ավելի ճիշտ՝ Նիկիայի հավատո հանգանակի հաստատումը) տեղի է ունեցել 636 թվականի Հազիրան (Հունիս) ամսի 19-ին։

16 =326/327 թ.։ Այս կից կառուցվածքը XIV հատվածում հիշված Եդեսիայի եկեղեցու արևելյան կողմն է։

17 =338 թ.։ Հակոբ Մծբնա հայրապետը նույնպես մասնակցում էր Նիկիայի ժողովին։

18 =345/346 թ.։ Այդ մատուռը գտնվում էր քաղաքի հարավ-արևմտյան կողմում։ Այն հրդեհի միջոցով կործանեց 503 թ. պարսից թագավոր Կավադ 1-ը (488—531)։

XIX 660 թ. Կոստանդինի որդի Կոստանցիոսը կառուցեց Ամիդ քաղաքը[19]։

XX 661 թ. Կոստանցիոսը կառուցեց նաև Տելլա քաղաքը, որը մինչև այն Անտիպոլիս (Անտոնինոպոլիս) էր կոչվում[20]։

XXI 667 թ. Աբրահամ Քիտոնայան ճգնավոր դարձավ[21]։

XXII (XXIII) 672 թ. աշխարհից հեռացավ Ուռհայի եպիսկոպոս Աբրահամը[22]։

XXIII (XXIV) Նույն տարին աշխարհից հեռացավ Մծբինի եպիսկոպոս Վոլոգեսոսը[23]։

XXIV (XXV) Նույն տարին Բարսե եպիսկոպոսը կայսեր հրամանով Խառանից Ուռհա փոխադրվեց։

XXV (XXVII) 670 թ. երկրաշարժից կործանվեց Նիկոմեդիան[24]։

XXVI 674 թ. Հաղիրան ամսին Հուլիանոսը ելավ պարսիկների դեմ, պատերազմեց նրանց դեմ և այնտեղ սպանվեց[25]։

XXVII 675 թվականի Շեբաթ ամսին թագավորեցին Վալենտինիան (Մեծը) և նրա եղբայր Վաղեսը (Վալենտը)[26]։

XXVIII 678 թվականին այս աշխարհը թողեց Մար Հուլիանոս Սաբհան։

XXIX 681 թ. կառուցվեց Ուռհայի մեծ Մկրտարանը[27]։

XXX 684 թ. Հաղիրան ամսի 9-ին այս աշխարհը թողեց ամենաիմաստուն Մար Աֆրեմը[28]։

XXXI Նույն տարվա էլուլ ամսին ժողովուրդը արիոսականների հանած հալածանքի հետևանքով թողեց Ուռհայի եկեղեցին[29]։

XXXII 689 թ. Ադար ամսին վախճանվեց Ուռհայի եպիսկոպոս Մար Բարսեն[30]։

XXXIII Նույն տարին Քանուն քրդեմ ամսի 27-ին ուղղափառները նորից գրավեցին Ուռհայի եկեղեցին[31]։

---

19 =348/349 թ.։

20 =349/350 թ.։ Հմմտ. № XIX։

21 =355/356 թ.։

22 =360/361 թ.։

23 Սրա եպիսկոպոսության տարիները հաշվում են 346—350-ից մինչև 360/361 թ.։

24 =358/359 թ.։

25 =363 թ. հունիսին։

26 =364 թ. փետրվարին։ Վալենտինիանը իշխանության գլուխ անցավ 364 թ. փետրվարի 26-ին, իսկ մարտի 28-ին նա իր եղբայր Վաղեսին կայսերակից հայտարարեց։

27 =369/370 թ.։

28 =373 թ. հունիսի 9-ին։ Այժմյան հայկական Սուրբ Սարգսի վանքում (Եդեսիայից արևմուտք) ցույց է տրվում Եփրեմ Ասորու գերեզմանը։ Հմմտ. Sachau, Reise in Syrien und Mesopotamien, էջ 202։

29 =373 թ. սեպտեմբերին։ Այս այն ժամանակն էր, երբ Վաղես կայսրը զորքով եկել էր Ասորիք և սաստիկ հալածում էր Նիկիայի կամ Աթանաս Աղեքսանդրացու կողմնակիցներին և նույնիսկ արգելել էր նրանց կրոնական պաշտամունքը։

30 =378 թ. մարտին։ Սա սկզբում հավանորեն արիոսականների կողմն էր, բայց հետո միացավ կապադովկիացիներին (Բարսեղ Կեսարացի, Գրիգոր Աստվածական և Գրիգոր Նյուսացի)։

31 =378 թ. դեկտեմբերին։

XXXIV Այդ օրերում, այն տարին, երբ իշխանության հասավ Թեոդոս Մեծը, եպիսկոպոս դարձավ Մար Եվլոգիոսը։ Այս Մար Եվլոգիոսը կառուցեց Մար Դանիելի եկեղեցին, որ [հետագայում] կոչվեց Մար Դոմիցիոսի եկեղեցի[32]։

XXXV 692 թ. Թեոդոս Մեծը Օզրոենում կառուցեց Ռեշայնա քաղաքը[33]։

XXXVI 693 թ. Կոստանդնուպոլսում հավաքվեց 150 եպիսկոպոսների ժողովը[34]։

XXXVII 698 թ. այս աշխարհից հեռացավ Մար Եվլոգիոս եպիսկոպոսը չարշարանաց [շաբաթվա] ուրբաթ օրը[35]։

XXXVIII 705 թվականի Աբ ամսի 22-ին Մար Թոմաս առաքյալի տապանակը բերին իր մեծ տաճարը Մար Կյուրե եպիսկոպոսի օրերում[36]։

XXXIX 706 թվականի Քանուն խրայ ամսի 17-ին վախճանվեց Թեոդոս Մեծ կայսրը։ Նիսանի 27-ին Արկադիոսը Կոստանդնուպոլիս մտավ և Թշրին խրայ ամսի 8-ին Թեոդոսի դին փոխադրվեց Կոստանդնուպոլիս[37]։

XL Նույն տարվա Թամմուզ ամսին հոները ներխուժեցին հռոմեական պետության (սահմանները)[38]։

XLI 707 թվականի Թամմուզ ամսի 22-ին վախճանվեց Ուռհայի եպիսկոպոս Մար Կյուրեն[39]։

XLII 708 թվականին Ուռհայի եպիսկոպոս դարձավ Մար Սիլվանուսը[40]։

XLIII 710 թվականի Թշրին քըդեմ ամսի 17-ին վախճանվեց Ուռհայի եպիսկոպոս Մար Սիլվանուսը[41]։

XLIV Նույն տարվա Թշրին խրայ ամսի 20-ին Ուռհայի եպիսկոպոս դարձավ Մար Պեքիդան[42]։

---

32 =379 թ., որովհետև Թեոդոսը կայսր դարձավ 379 թ. հունվարի 19-ին։ Եվլոգիոսը մասնակցել է Անտիոքի 379 և Կոստանդնուպոլսի 381 թ. ժողովներին։

33 =380/381 թ.։

34 =381/382 թ.։ Ժամանակագրակսն տվյալը ճշգրիտ չէ։ Ժողովը հավաքվել է 381 թ. մայիսին և նիստեր է ունեցել մինչև հուլիսի 9-ը։

35 =387 թ. ապրիլի 23-ին։

36 =394 թ. օգոստոսի 28-ին։ Եդեսիայի եկեղեցին կրում էր Թոմաս առաքյալի անունը արդեն Բարսեի օրերից։

37 =395 թ. հունվարի 17-ին—395 թ. նոյեմբերի 8-ը։

38 Այդ դեպքը պետք է տեղի ունեցած լինի 706 թ.։ Ժամանակագիրներից մեկն ասում է. «706 թվականին հոների նզովյալ ժողովուրդը ներխուժեց հռոմեական պետությունը, անցավ Մոփաց երկրով, Հայաստանով, Միջագետքով, Ասորիքով և Կապադովկիայով մինչև Գաղատիա և շատ գերիներ տարավ իր հետ։ Հետո նրանք (հոները) շուռ եկան, կարծես ուզում էին հայրենիք վերադառնալ, բայց արշավեցին Պարսից երկիրը Եփրատի և Տիգրիսի երկարությամբ և հասան պարսկական մայրաքաղաքը, և թեև նրան վնաս չտվին, բայց ավերեցին Եփրատի և Տիգրիսի շրջանում գտնվող շատ գյուղեր, շատերին սպանեցին, շատերին էլ գերի տարան»։

39 =396 թ. հուլիսի 22-ին։

40 =մոտավորապես 397 թ. աշնանը։

41 =398 թ. հոկտեմբերի 17-ին։

42 =398 թ. նոյեմբերի 23-ին։ Պեքիդաս կամ այլ արտասանությամբ Բաքիդաս եպիսկոպոսի մասին պետք է ասել հետևյալը. այս Բաքիդասն է անշուշտ Եդեսիայի այն եպիսկոպոսը,

XLV Նույն տարին Կոստանդնուպոլսի եպիսկոպոս դարձավ Հովհան Ոսկեբերանը[43]։

XLVI 714 թվականին Մոպսուեստիայի եպիսկոպոս Թեոդորը սկսեց մեկնաբանել (սուրբ) գրքերը[44]։

XLVII 715 թվականին Աբսամյա երեցը, երանելի Մար Աֆրեմի քրոջ որդին, օրհներգություններ (madrasche) և ճառեր (mêmrê) հորինեց հոների հռովմեական պետություն ներխուժելու մասին[45]։

XLVIII 720 թվականին Ուռհայի եպիսկոպոս դարձավ Մար Դիոդենիոսը. նա սկսեց կառուցել Մար Բարլահայի վկայարանը[46]։

IL Նույն տարին Աբ ամսի նորալուսնին աշխարհը թողեց Ուռհայի եպիսկոպոս Մար Պեքիդան[47]։

L 721 թվականին Կյուրիլլոսը դարձավ Մեծ Ալեքսանդրիայի եպիսկոպոս[48]։

LI 723 թվականին Ուռհայում եպիսկոպոս դարձավ Բաբբուլան։ Նա կառուցեց Մար Ստեֆանոսի վկայարանը, որ առաջ հրեաների ժողովարանն էր եղել. բայց նա այն կառուցեց կայսեր հրամանով[49]։

LII 724 թվականին, Հոնորիոս և Արկադիոս հաղթական կայսրների օրով, ջրհեղեղը նորից կործանեց Ուռհայի պարիսպները, երրորդ անգամ[50]։

որի մոտ է հյուրընկալվել Մեսրոպ Մաշտոցը հայերի համար տառեր ստեղծելու իր որոնումների ժամանակ, անունը (Բ ա ք ի դ ա ս) աղավաղվելով դարձել է Բ ա բ ի դ ա ս։ Այս վերջին անունը Բաբբուլասից հանելու բոլոր փորձերը պետք է անհիմն համարել։ Ոչ մի կովան չունի, մանավանդ, Բաբբուլասի ՈՒ-ն Ի դարձնելը՝ Բաբիլասին նմանեցնելու համար։ Այս հարցի մասին տե՛ս Հ. Յ. Թ ո ր ո ս յ ա ն, «Բազմավեպ», 1932, էջ 259—260, Ն. Ա կ ի ն յ ա ն, «Հանդես ամսօրյա», 1935, էջ 514, Ե. Տ ե ր-Մ ի ն ա ս յ ա ն, «Բանբեր Մատենադարանի», № 7, Երևան, 1964, էջ 30. «Հայոց գրերի գյուտի թվականի մասին» և այլն։

43 =398/399 թ.։ Այս հաշվի մեջ մի փոքրիկ անճշտություն կա։ Հովհան Ոսկեբերանը Կոստանդնուպոլսի աթոռը բարձրացել է 398 թ. փետրվարի 27-ին, որ համապատասխանում է Սելևկյան 709 թվականին, այնինչ այստեղ ասված է 710 թվականին։

44 =409 թ. (օգոստոսին կամ սեպտեմբերին)։ Այս տվյալը այլ տեղեկություններով չի հաստատվում։

45 =403/404 թ.։

46 =409 թ. օգոստոսին կամ սեպտեմբերին, նա հավանորեն մեռել է 722-ի վերջերին, որովհետև Բաբբուլասը եպիսկոպոս է դարձել 723 թ. (ամենաշուտը 411 թ. հոկտեմբերին)։

47 =409 թ. օգոստոսի 1-ին։

48 =409/410 թ.։ Իրոք Կյուրեղը Ալեքսանդրիայի պատրիարք է դարձել 412 թ. հոկտեմբերի 18-ից։

49 =411/412 թ.։ Հալլիերը առաջարկում է «հրեաների ժողովարանը» կարդալ «ավդիականների ժողովարան»։ Այդ հերետիկոսների դեմ Բաբբուլասը երկար պայքար է մղել, խլել է նրանց աղոթատները, ժողովարանները և դրանք հանձնել իրեն հետևող «ուղղափառներին»։ Սրա մասին տե՛ս Ե. Տ ե ր-Մ ի ն ա ս յ ա ն, Միջնադարյան աղանդների ծագման և զարգացման պատմությունից, էջ 70—71. հմմտ. G. H o f f m a n n, Auszüge aus Syrischen Akten persische Martyrer, Leipzig, 1880, էջ 122—128։

50 =413 թ., ճշգրիտ ժամանակագրական տվյալով (հմմտ. CVI)՝ երեքշաբթի օրը, մարտի 18-ին։ Արկադիոսի անունը սխալաբար է հիշված, որովհետև նա վախճանվել է 408 թվականին։ CVI հատվածում, սույն ժամանակագրության վերջում, ճիշտ է նշված՝ «Հոնորիոս և Թեոդոսիոս հաղթական կայսրների օրով»։

LIII 732 թվականին վանական դարձավ Եվտիքեսը, որը ժխտում էր մարդեղությունը[51]։

LIV Այդ ժամանակ մարտիրոսացավ երանելի Հակոբ Մեֆասսեկան (Jakobus Intercisus)[52]։

LV 739 թվականին հայտնի դարձավ այն մարդկանց հերետիկոսությունը, որոնք ասում են, թե մեղքը ի բնե բնածին է։

LVI 740 թվականին[53] ծաղկեց Շեմիշատի[54] եպիսկոպոս Անդրեասը։

LVII 741 թվականին երկնքից փոշի թափվեց[55]։

LVIII 744 թվականին հավաքվեց Եփեսոսի առաջին ժողովը[56]։

LIX 746 թվականի Աբ ամսի 8-ին[57] այս աշխարհից հեռացավ Ուռհայի եպիսկոպոս Բաբբուլան, նրան հաջորդեց մեծ Հիբան[58]։ Սա նոր եկեղեցի կառուցեց, որ այսօր կոչվում է Առաքելոց եկեղեցի։

LX 749 թվականին հարգարժան Հիբայի ժամանակ սենատորը նվիրեց մի մեծ արծաթե սեղան, որը 720 ֆունտ էր կշռում։ Այն դրվեց Ուռհայի հին եկեղեցում[59]։

LXI 753 թվականին ստրատելատ Անատոլիոսը պատրաստել տվեց արծաթե մի տուփ, ի պատիվ սուրբ Թոմաս առաքյալի նշխարների։

LXII 756 թվականին Դիոսկորոսը դարձավ մեծ Ալեքսանդրիայի եպիսկոպոս[60]։

LXIII Եվ նորից հավաքվեց Եփեսոսում երկրորդ ժողովը։ Սա (Դիոսկորոսը) բանադրեց Կոստանդնուպոլսի եպիսկոպոս Ֆլավիանոսին, Դոմնոս Անտիոքացուն, Իրենիոս Տյուրոսցուն, Հիբա Ուռհայեցուն, Եվսեբիոս Դորիլեումցուն, Դանիել Խառանցուն, Սոֆրոնիոս Տելլացուն և Թեոդորետ Կյուրոսցուն։

LXIV 759 թվականի Քանուն խրայ ամսի 1-ին[61] Հիբա եպիսկոպոսը հեռացավ Ուռհայից։ Թամմուզի 21-ին նրա տեղը բռնեց Սոնոսը, մնաց երկու տարի և եկեղեցում կառուցեց ամենասուրբ սեղանը (hierateion).

LXV 760 թվականին Հռոմի եպիսկոպոս դարձավ Լևոնը[62]։

---

51 =420/421 թ.։ Եվտիքեսը ավելի քան 30 տարի մի վանքի վանահայր էր Կոստանդնուպոլսի մոտակայքում և արդեն 431-ին դրսևորել էր իրեն որպես Նեստորի կատաղի հակառակորդ։

52 Կտրատվածը։ Քրիստոնյա նահատակներին տանջելու եղանակ, որի ժամանակ սրով կտրատում էին նրանց մարմնի անդամները։

53 =428/429 թ.։

54 Շեմիշատը Սամոսատ քաղաքի ասորական անունն է։

55 =429/430 թ.։

56 =432/433 թ.։ Թվականը ճիշտ չի տրված, պետք է լինի 431 թ.։

57 =435 թ. օգոստոսի 8-ին։ Բաբբուլասի մահվան օրը իսկապես օգոստոսի 7-ն է, օգոստոսի 8-ին տեղի է ունեցել նրա թաղումը։

58 Հիբան սովորական արտասանությամբ կոչվում է Իբաս։

59 =437/438 թ.։

60 =444/445։

61 =448 թ. հունվարի 1—448 թ. հուլիսի 21-ը։ Այս թիվը ճիշտ չէ, պետք է առնվազն երկու տարի ուշ պատահած լինի (450 թ. հունվարի 1-ին)։

62 =448/449 թ.։ Ժամանակագրական տվյալը սխալ է, Լևոնը Հռոմի պապ էր արդեն 440 թ.։

LXVI 762 թվականին հավաքվեց ժողովը Քաղկեդոնում[63]։

LXVII 763 թվականին ծաղկում էր գրող և վանահայր Մար Իսահակը[64]։

LXVIII 769 թվականի Թշրին քըդեմ ամսի 28-ին[65] վախճանվեց Ուռհայի եպիսկոպոս Հիբան, և նրան հաջորդեց Նոննոսը, որը կառուցեց Մար Հովհաննես Մկրտչի եկեղեցին և խեղճ բորոտների տան հիվանդանոցը Բեթ Շեմեշի պարիսպներից այն կողմը։ Բայց նա աղքատների հիվանդանոցում կառուցեց մի վկայարան Մար Կողմայի և Մար Դամիանի անունով։ Նա կառուցեց նմանապես վանքեր և աշտարակներ, շինեց կամուրջներ և հոգ էր տանում ճանապարհների ապահովության մասին։

LXIX 771 թվականի էլուլ ամսի 2-ին, չորեքշաբթի ժամը 11-ին աշխարհից հեռացավ երանելի Սիմեոն Սյունակյացը[66]։

LXX 777 թվականին Լևոնը (Լևոն կայսրը) Օղրոենում կառուցեց Կալլինիկոսը և այն իր անունով Լեոնտոպոլիս կոչեց և այնտեղ նաև եպիսկոպոս նշանակեց[67]։

LXXI 782 թվականին վախճանվեց Ուռհայի եպիսկոպոս Նոննոսը և նրան հաջորդեց Կյուրոսը[68]։

LXXII 795 թվականին Լեոնտիոսը ապստամբեց Զենոնի դեմ և երկու տարի իշխեց Անտիոքում[69]։

LXXIII 800 թվականին պարսիկների դպրոցն Ուռհայում հիմնովին կործանվեց[70]։

LXXIV 809 թվականի Իյար ամսին ներվեց արհեստավորների արհեստային հարկը (χρυσαργυρον) ամբողջ երկրում[71]։

LXXV Նույն թվականի Հազիրան ամսի 6-ին վախճանվեց Ուռհայի եպիսկոպոս Կյուրոսը. նրան հաջորդեց Պետրոսը, որ Ուռհա ժամանեց նույն տարվա էլուլի 12-ին[72]։

LXXVI 810 թվականին երևաց մեծ քանակությամբ մորեխ, բայց այդ տարին շատ վնաս չտվեց, բայց ձու դրեց։ Տեղի ունեցավ մեծ երկրաշարժ։ Աբարնի տաք ջրերը [երեք օր] դադարեցին [բխելուց]։ Նիկոպոլիս (Էմմաուս) քաղաքն ավերվեց և հողի տակ թաղեց բոլոր բնակիչներին, բացառությամբ սրբարանի, եպիսկոպոսի և նրա երկու խցակիցների։ Տեգի նման մի նշան շատ օրեր երևում էր երկնքի վրա Քանուն խրայ ամսին[73]։

---

63 =451 թ.։

64 =451/452 թ.։

65 =457 թ. հոկտեմբերի 28-ին։

66 =459 (ոչ 466) թ. սեպտեմբերի 2-ին։

67 =465/466 թ.։

68 =470/471 թ.։

69 =484 թ.։

70 =488/489 թ.։

71 =498 թ. մայիսին։

72 =6 հունիսի 498—նույն թ. սեպտեմբերի 12։

73 =499 թ.։ Այլ աղբյուրների համաձայն Աբարնի տաք ջրերը միայն մի օր են դադարել բխելուց։ «Երեք օրը», Գվիդիի կարծիքով, հետո է ներմուծված։

LXXVII Անաստասիոս կայսրը Կոստանդնուպոլսի եպիսկոպոս Էվֆեմիոսին հեռացրեց իր պաշտոնից, և նրան հաջորդեց Մակեդոնիոսը[74]։

LXXVIII 811 թվականին մորեխների մեծ բազմություն եկավ, մեծ վնաս տվեց և կերավ ամբողջ հացահատիկը[75]։

LXXIX 813 թվականի Աբ ամսի 22-ին մի մեծ լույս էր երևում [երկնակամարի] հյուսիսային կողմում, որ փայլում էր ամբողջ գիշերը[76]։

LXXX 814 թվականի Թշրին քրդեմ ամսի 5-ին պարսից թագավոր Կավադը պաշարեց Ամիդ քաղաքը Միջագետքում, հարձակվեց նրա վրա և գրավեց այն 97 օր հետո[77]։

LXXXI Նույն թվականի էլուլ ամսին նա [Կավադը] եկավ և պաշարեց Ուռհան, բայց աստծու ողորմածությամբ ոչ մի վնաս չտվեց, բացի նրանից, որ հրդեհել տվեց Սերգիոսի վկայարանը և խոստովանողների տաճարի հյուսիսային բազիլիկան[78]։

LXXXII 821 թվականի զատկի կիրակի օրը վախճանվեց Ուռհայի եպիսկոպոս Պետրոսը, և նրան հաջորդեց Պողոսը[79]։

LXXXIII Անաստասիոսի թագավորության 21 տարում նա հրամայեց, որ բաց անեն մարտիրոսուհի Էվֆեմիայի տապանը և այնտեղից հանեն այրելու համար այն գիրքը, որ գտնվել էր այնտեղ Քաղկեդոնում հավաքված ժողովը։ Բայց այնտեղից կրակ ժայթքեց և խփեց այն մարդկանց դեմքերին, որոնք ուզում էին այն (գիրքը) հանել։ Ուստի և Անաստասիոսը հետ կանգնեց այն հանելու և այրելու մտադրությունից[80]։

LXXXIV Բայց նա դուրս արեց Կոստանդնուպոլսի եպիսկոպոս Մակեդոնիոսին, որովհետև նա չնզովեց (Քաղկեդոնի) ժողովը, և նրան հաջորդեց Տիմոթեոսը[81]։

LXXXV Անաստասիոսի (թագավորության) 24-րդ տարում նրա դեմ ապստամբվեց Վիտալիանը[82]։

LXXXVI 829 թվականի Թամմուզ ամսի 9-ին վախճանվեց Անաստասիոս կայսրը և նրան հաջորդեց Հուստինոսը[83]։

LXXXVII Հուստինոսի թագավորության երկրորդ տարում, որ 830 թվականն է, նա արտաքսեց Անտիոքից Սևերոսին և Մաբուգից

---

74 Էվֆեմիոս եպիսկոպոսը իր աթոռից հեռացվել է ո՛չ թե 499 թ., ինչպես ենթադրվում է այստեղ, այլ 496 թ.։

75 =500 թ.։

76 =502 թ. օգոստոսի 22-ին։

77=503 թ. հոկտեմբերի 5-ին։

78 =503 թ. սեպտեմբերին։

79 =510 թ. ապրիլի 10-ին։

80 Անաստասիոսի 21-րդ տարին=511 թ. ապրիլի 11-ից մինչև 512 թ. ապրիլի 11-ը։ Ավանդությունը հիմնված է այն իրողության վրա, որ Էվֆեմիայի տաճարում էին տեղի ունենում Քաղկեդոնի ժողովի նիստերը։

81 Մակեդոնիոսի արտաքսումը նույնպես տեղի է ունեցել 511 թ.։

82 Անաստասիոսի 24-րդ տարին է 11 ապրիլ 514—11 ապրիլ 515։

83 =518 թ. հուլիսի 9-ին։

Քսենայասին և այն բոլորին, որոնք չէին ընդունում չորս ժողովները[84]։

LXXXVIII 831 թվականի Թշրին խրայ ամսի 4-ին Ուռհա ժամանեց Պատրիկը, որպեսզի այնտեղից հեռացնի Պողոսին։ Նա ստիպում էր նրան անելու երկուսից մեկը, կա՛մ ընդունել [Քաղկեդոնի] ժողովը և մնալ եպիսկոպոսական աթոռի վրա, կա՛մ, եթե չի կարող համաձայնել, թողնել աթոռը։ Բայց նա չհամոզվեց ո՛չ մեկին այդ երկուսից, այլ փախավ մտավ Մկրտարանը և տեղավորվեց այնտեղ։ Բայց երբ Պատրիկը տեսավ, որ չկարողացավ նրան համոզել անելու սրանցից մեկնումեկը, կայսեր հրամանից վախենալով՝ բռնությամբ հանեց նրան Մկրտարանից և ուղարկեց Սելևկիա։ Երբ կայսրը լսեց, որ նրան բռնի հանել են Մկրտարանից, կարգադրեց նրան վերադարձնել իր աթոռը այն հույսով, որ նա հիմա զղջում կզգա և կընդունի ժողովը։ Պողոսը կրկին վերադարձավ իր աթոռը 44 օր հետո և երկար ժամանակ մնաց [Ուռհայում], բայց առանց ընդունելու [Քաղկեդոնի] ժողովը։ Որովհետև կայսրը տեսավ, որ նրան համոզել կարելի չեղավ, նրան աքսորեց Եվխաիտա[85]։ Պողոսը Ուռհայից հեռացավ 839 թվականի Թամմուզ ամսի 27-ին[86]։ Նրան հաջորդեց Ասկլեպիոսը, որը Ուռհա ժամանեց 834 թվականի Թշրին քըդեմ ամսի 23-ին, Պողոս եպիսկոպոսի Ուռհայից հեռանալուց երեք ամիս հետո[87]։

LXXXIX (XC)[88] Քանուն քըդեմ ամսի 24-ին, Ասկլեպիոս եպիսկոպոսի Ուռհա ժամանելուց հետո նա արտաքսեց արևելյան վանականներին նրանց մոտակայքում բնակվող և նրանց կողմնակից բոլոր վանականների հետ միասին, որովհետև նրանք չէին ընդունում Քաղկեդոնի ժողովը[89]։

XC (XCI) 836 թ. հորդացած ջուրը չորրորդ անգամ հեղեղեց Ուռհան, կործանեց պարիսպները, հիմքից ավերեց բնակարանները, խեղդեց բնակիչներին և մեծ ավերածություններ գործեց այնտեղ[90]։

XCI (XCII) Եվ այդ պատճառով Ասկլեպիոս եպիսկոպոսը փախավ Ուռհայից և ուղևորվեց Անտիոք Եվֆրազիոս պատրիարքի մոտ, որտեղ նա մնաց 70 օր։ Այնտեղ՝ Անտիոքում նա մեռավ նույն թվականի Հաղիրան ամսի 27-ին և այնտեղ էլ թաղվեց։ Նույն թվականի էլուլ ամսի 4-ին [նրա դին] Անտիոքից փոխադրեցին

---

84 Հուստինոսի 2-րդ տարին սկսվում է 519 թ. հուլիսի 10-ին։

85 Այդ վայրը գտնվում է Պոնտոսի մարզում։

86 Պողոսի եպիսկոպոսության առաջին շրջանը տևել է 510 թ. կեսերից մինչև 519 թ. նոյեմբերի 4-ը, երկրորդ շրջանը՝ 519 թվականի դեկտեմբերի վերջից մինչև 522 թ. հուլիսի 27-ը, որը հավասար է 2 տարվա և 7 ամսվա։

87 =522 թ. հոկտեմբերի 23-ին։

88 Հատվածների համարների մեջ արված փոփոխությունները կատարել է սույն գրքույկի առաջին հրատարակիչ Ասսեմանին. հետագա հրատարակիչները և թարգմանիչները (Hallier, Guidi) պահպանել են այդ փոփոխությունները։

89 =522 թ. դեկտեմբերի 24-ին։

90 =525 թ.։

Ուռհա և թաղեցին Մար Բարլահի եկեղեցում՝ Մար Նոննոս եպիսկոպոսի կողքին[91]։

XCII (XCIII) Երբ Պողոսը լսեց, որ Ասկլեպիոսը մեռել է, զղջաց և խընդրագրով դիմեց պատրիկ Մար Հուստինիանոսին, մի թուղթ էլ գրեց Եվֆրազիոս պատրիարքին։ Նրա գրած թղթի և փառավոր ու աստվածասեր պատրիկ Հուստինիանոսի նամակի հետևանքով նրան վերահաստատեցին և նա վերադարձավ իր եպիսկոպոսական աթոռը։ Նա Ուռհա ժամանեց 837 թվականի Ադար ամսի 8-ին, Մար Ասկլեպիոսի մահից ութ ամիս անց[92]։

XCIII (XCIV) Իսկ Պողոս եպիսկոպոսը, երրորդ անգամ իր եպիսկոպոսական աթոռը վերադառնալուց հետո, ապրեց ութ ամսից ութ օր պակաս։ 838 թվականի Թշրին քըդեմ ամսի 30-ին վախճանվեց Պողոս եպիսկոպոսը[93]։

XCIV (XCV) Նրան հաջորդեց Անդրեասը, որ Ուռհա ժամանեց նույն 838 թվականի Շեբաթ ամսի 7-ին[94]։

XCV (LXXXVIII) Բայց աստվածասեր կայսր Հուստինիանոսը հոգս ու եռանդ էր գործադրում, մինչև որ գրեց չորս սուրբ ժողովները եկեղեցու դիպտիխոնում, այն է՝ Նիկիայի, Կոստանդնուպոլսի, Եփեսոսի առաջին և Քաղկեդոնի ժողովները[95]։

XCVI (CIV) Հուստինիանոսի իշխանության 13-րդ տարում, 850 թվականին, երկրորդ ինդիկտիոնին, Թշրին քըդեմ ամսի 5-ին երկնքում երևաց մի նշան, որ տեգի էր նման[96]։

XCVII (XCVI) 837 թվականի Իյար ամսի 29-ին, ուրբաթ օրը ժամը 7-ին տեղի ունեցավ մեծ և ահռելի երկրաշարժ, որի հետևանքով կործանվեց Անտիոքի մեծ մասը, նրա բնակիչները (բառացի՝ զավակները) հողի տակ թաղվեցին և խեղդվեցին[97]։

XCVIII (IC) 839 թ. Թշրին խրայ ամսի 15-ին մեծ հրդեհ եղավ Անտիոքում և դա այրեց մեծագույն մասն այն ամենի, ինչ որ ողջ էր մնացել երկրաշարժից։ Որտեղից սկսվեց հրդեհը, հայտնի չեղավ[98]։

XCIX (XCVII) Եվ այդ երկրաշարժի ժամանակ մեռավ նաև Եվֆրազիոս պատրիարքը, որը թաղվեց-մնաց տների ավերակների տակ։ Ինչպես ասում են՝ ամբողջ օրը հեծեծանք էր լսվում տների ավերակների տակից։ Նրանից հետո Անտիոքում եպիսկոպոս դարձավ Աֆրեմը Ամիդից, Արևելից (Անատոլիայի) կոմսը։

---

91 =525 թ. 27 հունիսի—4 սեպտեմբերի։

92 =526 թ. մարտի 8-ին։

93 =526 թ. հոկտեմբերի 30-ին։

94 =527 թ. փետրվարի 7-ին։

95 Գլխավոր հարցը վերաբերում է Քաղկեդոնի ժողովին, որի ուղղափառությունը պաշտպանում էր Հուստինիանոսը։ Մյուս երեք ժողովներն ընդունում էին նաև միաբնակները։

96 Հուստինիանոսի 13-րդ տարին սկսվում է 539 թ. ապրիլի 1-ից կամ օգոստոսից (Նիսան կամ Աբ ամսից)։ Այստեղ հաշիվները մի փոքր խառնված են. ճիշտը կլիներ հետևյալը. «Հուստինիանոսի իշխանության 13-րդ տարում, որ երրորդ ինդիկտիոնի 851 թ. է» և այլն։

97 =526 թ. մայիսի 22-ին, ժամը 1-ին։

98 =527 թ. նոյեմբերի 15-ին։

C (CIII) 844 թվականի Քանուն քրդեմ ամսի 6-ին աշխարհը թողեց Մար Անդրեաս եպիսկոպոսը և թաղվեց Մար Բարլահի եկեղեցում, Մար Նոննոսի և Մար Ասկլեպիոսի նշխարների կողքին։ Նրան հաջորդեց Ադդայը, որը Ուռհա ժամանեց 844 թվականի Աբ ամսի 28-ին[99]։

CI (XCVIII) 838 թվականի Նիսան ամսի 1-ին կայսր դարձավ Մար Հուստինիանը և նույն տարվա Աբ ամսի 10-ին վախճանվեց Հուստինոս կայսրը և Մար Հուստինիանը թագավորեց մենակ[100]։

CII (C) 842 թվականի Թամմուզ ամսին Ուռհա ժամանեց Մար Դեմոսթենեսը, որպեսզի ստանձնի հռովմեական զորքերի հրամանատարությունը[101]։

CIII (CI) 843 թ. Քանուն քրդեմ ամսի 18-ին հոները ներխուժեցին հռովմեական պետության սահմանները, շատ գերիներ տարան և երկիրն ավերեցին մինչև Հալեբի մարզը և Անտիոքի տասներկուերորդ մղոնաքարը։ Այդ աղետի ժամանակ հիվանդացավ Մար Դեմոսթենեսը և մեռավ Տելլայում նույն տարվա Քանուն խրայ ամսի 10-ին[102]։

CIV (CII) 843 թ. Էլուլ ամսին պատրիկ Մար Ռուֆինոսը հաշտություն կնքեց հռովմայեցիների և պարսիկների միջև։ Այդ հաշտությունը տևեց մինչև 851 թվականը[103]։

CV (CIV) Այդ թվականի Իյար ամսին պարսից Խոսրով թագավորը խախտեց խաղաղությունը, ներխուժեց հռովմեական պետության սահմանները, ավերեց Շուրան, Հալեբը և Անտիոքը, գրավեց նաև Ապամեան և հետդարձին հասավ մինչև Ուռհա։ Բայց քաղաքի հովանավոր աստծու ողորմածության շնորհիվ նա այս քաղաքին վնաս չհասցրեց, այլ քաղաքի մեծամեծները համաձայնեցրին նրան նահանջել, և նա 200 ֆունտ (կենտենար) ոսկի ընդունելուց հետո վերադարձավ իր երկիրը[104]։

CVI Ինչպես մենք իմացանք հին տեղեկատվություններից, Մեսիայի իր փառապանծ հոր մոտ համբառնալու ժամանակից ջուրը չորս անգամ կործանել է օրհնված քաղաքի պարիսպները, տապալել նրա աշտարակները, խեղդել նրա բնակիչներին (բառացի՝ զավակներին)։

Առաջին անգամ նրա պարիսպները խորտակվեցին հռոմեական Սևերոս կայսեր ժամանակ, ըստ հույների թվարկության 513 թվականին, Թշրին խրայ ամսին։

Երկրորդ անգամ նրա պարիսպները քանդվեցին Դիոկլետիանոս կայսեր օրերում, 614 թվականի Իյար ամսին։

Երրորդ անգամ [պարիսպները խորտակվեցին] հաղթական կայսրներ Հոնորիոսի և Թեոդոսիոսի օրերում, 724 թվականի

99 =532 թ. դեկտեմբերի 6-ից—533 թ. օգոստոսի 28։
100 =527 թ. ապրիլի 1—օգոստոսի 10։
101 —531 թ. հուլիսին։
102 =531 թ. դեկտեմբերի 18—532 թ. հունվարի 10։
103 =532 թ. սեպտեմբերին։
104 =540 թ. մայիսին։

Ադար ամսի 18-ին, երեքշաբթի օրը, երբ Ուռհայի եպիսկոպոսն էր Մար Բաբբուվասը։

Չորրորդ անգամ [պարիսպները կործանվեցին] Հուստինիանոս կայսեր ժամանակ, երբ Ուռհայի եպիսկոպոսն էր Ասկլեպիոսը[105]։

ЭДЕССКАЯ ХРОНИКА (CHRONICON EDESSENUM)

Проф. Е. Г. ТЕР-МИНАСЯН

(Резюме)

Среди сирийских хроник действительно историческую ценность имеет анонимная хроника „Chronicon Edessenum", сохранившаяся в Ватиканской рукописи CLVIII, изданной Ассеманием (в его же переводе на латинский язык) в Biblioteca Orientalis Clementino-Vaticana (т. I, стр. 387—417, Рим, 1719). Эта маленькая книжка издана и переведена вторично на латинский язык Ign. Guidi в 1903 г. в Corpus Scriptorum Christianorum Orientalium, Scriptores, Syri, Chronica minora, series tertia, tomus IV Имеется также издание и перевод Hallier-а на немецкий язык с обширным исследованием и примечаниями (Texte und untersuchungen, hrsg. Adolf Harnack und Oscar von Gebhardt, Leipzig, 1892).

Эдесская хроника содержит ценные сведения об исторических событиях на Ближнем Востоке, о нашествии гуннов на Византийскую империю, о взаимоотношениях византийцев и персов, о деятельности византийских императоров. В ней перечисляются все эдесские иерархи и говорится об их деятельности. Записи начинаются с 180 г. селевкидской эры, но они весьма отрывочны до 513 г. (=202 г. по р. Хр.). Последняя запись относится к 540 г. н. э.—времени, когда, вероятно, была составлена эта книжка. Автор пользовался эдесскими архивами и документами, не дошедшими до нас. По свидетельству W. Wright-а, автор далеко не является фанатиком в религиозных вопросах и не употребляет грубых выражений, что примечательно для того времени (W. Wright, A Short History of Syriac Literature, London, 1894, стр. 101—102, ср. перевод этой книги на русский язык: В. Райт, Краткий очерк истории сирийской литературы, перевод с английского К. А. Тураевой, под редакцией и с дополнениями проф. П. К. Коковцова, СПб., 1902, стр. 70—71).

---

[105] *Հմմտ.* I, IX, LII *և* XC *համարները։*